

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 17

26 ԱՊՐԻԼ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար տառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Զրանք կամ 5 բուլղի: Թղթատարական ծախքը հմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն տոկոսունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մեկին: ՄԱՍԻՍ կ'ելլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, եւ իսկոյն իմացնեն հմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զինքատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամատչելի պայմաններով:

Ձեռն-ԲԵՒ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غرضه سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՐԵԼԻՆ

Եթե երախայ մը նիհար է և չի զաւարիր նէ, ակորժակ չունի և կերածը կատարեալ չի մարսեր նէ, և ակաւայները — սրունք չեն մեծնարկար նէ — ոչ բնականապէս միւս ազեաները կ'աւելցընէ թող իրեն արուի:



SCOTT'S EMULSION.

Ասիկայ մանկանց համար ակորժելի կերակուր և դէղ մըն է, և երախայն զայն խմած ատեն վերջի ատոմանի ուրախութեան մէջ կ'ըլլայ: Մայրը շուտով կը տեսնէ թե ինչպէս երախային բոլոր վիշակերը անմիջապէս կը դադրին. որպէս թէ նոր արեւուն և նոր կեանք բոլոր անկարգութիւնները չնչլով՝ մանկան ակտիւր անողջութեան և զուարդութեան փնթաղընցին: Երախայն միշտ պատրաստ է այս նոր (սուսկիք և) բմկելիքին և ակորժակով կրնա՞ն. Արակոն զաւարել և պղտիկ ձերմակ ակաւայները առանձնաւոր և վիշտերու կ'ընկան երեան էլլել: Բազմի բազմաբույ թիւեր երախայից անողջարար գիրութիւնուն և զաւարժում կուտայ, մարտդութեան կ'օգնէ և մարմնոյ ընդհանուր զօրութիւն կը պատճառէ:

ԸՄԿՕԹԻ ԲԵՂԸԹՐՈՒԹԻՈՒՆ

Բոլոր աղայոց Սիրելին է և զանոնք շուտով վարդապղն երեւոյթի և զօրաւոր և կատարեալ անողջութեան պատկերներու կը փոխէ: Բազմի բազմաբույ թիւեր միշտ այս նշանով վարդապղն փաթեթի մէջ ծալուած շիշերէն կը ձանջուի:

Շիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

Բոլոր բեղաւորները և բեղաւորները ինչ ծախին:

20

Ա.ՊԱՌԻԿ Վ.Ա.ՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ դոնարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գուլաղաններ եւ այլն, դիմե՛ղէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-թողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 չաբաթական վճարում: Կանխիկ դնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած դոնարեղէնները եթէ մնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին: Իսկ ապագոյ զբողներէն՝ 100ին 15 զեղչով:

Ա.ՄՐԱՆ ԱՌԹԻՒ

Կրսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչ կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼՆԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Մէյլանէն ուղղակի բերել տուած քաւմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահէճ Գափու, ձէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ զխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Յ. ՎԱՍԻԼԵԱՆԻ չորս տետրակներու մէջ ստիտիւտուած Գրավարժութեան նոր դրութիւնը հրատարակուեցաւ: Դիմել բոլոր հայ գրավաճառացի: Դին հատին 20 փարայ:

ՄԱՍԻՆ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 17

26 ԱՊՐԻԼ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՏԱՆԱԿՈՐԻ ՄՐԵՈՒՄը : — Վիպական քարգմանութիւնները մեր մէջ . ՅՈՎ. ԳԱԶԱՆՃԵԱՆ : — Ինչպէ՞ս կը գրեմ Մ. ԱՃԷՄԵԱՆ : — Օրուան հարցը . ԳՐ. ՄԱԼԽԱՍ : — Յրանաական գրականութեան . «Բանդուններուն Բանդունը» . ԶԱՊԷԼ ՆՍԱՅԵԱՆ : — Եզրակացութիւն մը . ՔՐԻՋԱՆԹԷՄ : — Դառնակումներ (Բանաստեղծութիւն)Մ . Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ : — Ուրուագիծներ . «Ա. Ալպոյանեան» ԳԱՄԷՐ : — Արհեստագիտական . ՀՐ. Թ. ԹԵՐԶԵԱՆ : — Խմբագրական Նօթեր :

ՈՏԱՆԱԿՈՐԻ ՄՐՅՈՒՄԸ

Ապրիլ 22 երեքշաբթի օրը լրացաւ՝ Մասիսի խմբագրութեան կողմէ բացուած Ռոտաւորի Մրցման միամսեայ պայմանաժամը, որու միջոցին հասած բանաստեղծութեանց թիւը կը հասնի ՔԱՌՍՈՒՆԻ, ամէնքն ալ բաժնուած Սթեք վերնադիրը կրող կամ նոյն նիւթին վրայ գրուած :

Սոյն քառսուն ձեռագիր ոտանաւորները, — որոնց հեղինակներուն խախտած ստորագրութիւնը պահուած կը մնայ դոյ պահարաններու մէջ, — յանձնուեցան յարգելի Քինիչներուն, ՏԵԱՐԲ՝ ԱՃԷՄԵԱՆ, ԹԵՐԶԵԱՆ, ՓԱՆՈՍԵԱՆ, որոնք՝ իրենց ծանօթ ձեռնհասութեամբ՝ զանոնք խղճամիտ քննութեան մը բովէն անցունելէ ետքը, պիտի որոշեն Մրցանակի արժանի դատուելիք լաւագոյն Ռոտաւորը որ պիտի հրատարակուի Մասիսի մէջ, անոր հեղինակին նուիրուելով՝ իբրեւ համեստ նշան մը քաջակերութեան ու դիւահատման՝ ՈՍԿԻ ԳՐԻՉ ՄԸ :

Ինչպէս նախորդ Յայտարարութեամբ մը ծանուցած ենք, այն պարագային ուր երկու երեք ոտանաւորներ միանգամայն հաւնուին Քինիչներուն կողմէ, իբրեւ յաջող նախափորձեր բանաստեղծութեան, որոշուած մըրքանակը վերադարձելով միշտ առաջին հրաւիրուածին, միւսներու հեղինակներուն ալ

պիտի նուիրուին գեղարուեստական մէյմէկ արժէքաւոր առարկայ, իբրեւ երկրորդ և երրորդ մրցանակ :

Իայց որպէս զի նիւթական պայմաններու մէջ չի սահմանափակուի այս Մրցումը, և դրական տեսակէտով մանաւանդ արդիւնք մը ունենայ, Մասիսի խմբագրութեան հրաւերով՝ Քինիչները կամ անոնցմէ մէկը ընդհանուր տեսութիւն մը գրի պիտի առնեն ներկայացուած բոլոր ոտանաւորներուն վրայ, ինչպէս եղաւ Նորալէպի Մրցման պահուն, առանց ի հարկէ ստորագրութիւնները երեւան հանելու : Մեր սկսնակ բանաստեղծները կամ այդ ձեւովն հակում ունեցող երիտասարդները հետաքրքրող այս ափիտի ուսումնասիրութիւնն ալ իր կարգին պիտի հրատարակինք Մասիսի մէջ :

Այս կերպով, կը կարծենք կատարել գործ մը որ՝ իր համեստ սահմանին մէջ՝ վաղանցիկ հետաքրքրութիւն մը շարժելու կամ ժամանցի համար սարքուած ըլլալու բնոյթը չունի ամենեւին : Ընդհակառակը, երեք տաղանդաւոր ու ծանօթ բանաստեղծներու վրաս տահուած, զուտ գրասիրական ձեռնարկութիւն մըն է՝ թարմ մտքերու և նոր գրիչներու վրայ բարերար ներգործութիւն մը առաջ բերելու ձգտող :

ԽՄԲԱԳՐ. «ՄԱՍԻՍ»

ՎԻՊԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԵՐԸ ՍԵՐ ՍԷՋ

Յայտնի է թէ վիպագրութիւնը թէև դժ-
րական չափ նոր սեռ մը՝ բայց կարճ ժամա-
նակի մէջ անհուն յառաջդիմութիւն ըրած է,
որուն ապացոյցն է ամէն լեզուէ և ամէն
տեղակ վէպերու այն յորդ արտադրութիւնը՝
որով կ'ողտուլին օտար դրական հրապարակ-
ները ու, թարգմանութեանց ճամբով, քիչ
մըն ալ մերինը:

Ամէն աղգերու դրականութեանց մէջ դժ-
րական այս համեմատապէս նոր սեռին այս-
քան ծաւալ և ընդունելութիւն գտնելը հար-
կաւ իրեն յատուկ պատճառներն ունի, պատ-
ճառներ՝ որոնք դադարեցներ ալ չեն ապա-
քէն: Եւ ստուղիւ, վիպագրութիւնը դրական
սեռերուն ամէնէն աւելի զբօսեցուցիչն է ուր
նաեւ կարելի է գտնել ամէնէն աւելի variété
ամէն ճաշակներն ալ դոհայնելու յարմար:
Իր այս առաւելութեամբ՝ վիպագրութիւնը
եղած է ժողովրդեան ամէնէն աւելի մատ-
չելի և անոր գերազանցապէս նախասիրած
դրական սեռը: Եւ ահա՝ դադարեցրել իր յա-
ջողութեան:

Եթէ սակայն վիպագրութեան նպատակն
ըլլար ժամանցի համար հետաքրքրական և
զբօսեցուցիչ ընթերցում մը միայն հայթայ-
թել ժողովուրդին՝ իրր դրական սեռ դոյու-
թեան իրաւունք պիտի չունենար յաւետ:
Բայց վիպագրութիւնը կրցած է այդ իրա-
ւունքը անկապակի կերպով իրեն ապահովել՝
իր հետաքրքրող և զբօսեցնող հանգամանքը
յաջողապէս ծառայեցնելով աշխիւ և օգտա-
կար դադարներու ծաւալման, ընկերային
ու ընտանեկան մոլութեանց ձաղկումին և
վերջապէս բարքերու աղնուացման գործին:
Միևեւոյն ասան դարձեալ իր այդ հանգա-
մանքին չնորհիւ յաջողած է ընդգրկել և ժո-
ղովրդականացնել դրական բոլոր միւս սե-
ռերը որոնք առանձինն առնուելով՝ ո'չ այն-
չափ մատչելի են ժողովրդեան մտքին և ո'չ
պէտք եղածին չափ հրապուրիչ՝ հաճոյքով և
հետաքրքրութեամբ կարդացուելու համար:

Այսպէսով, վէպը դրականութեան մէջ զը-
րաւած է անդուգական և հոյակապ գիրք մը
և եղած է դրական այն միակ սեռը՝ որ կըր-
ցած է իր մէջ միայնել թէ՛ իմաստասիրու-
թիւնը, թէ՛ գեղարուեստները և թէ՛ բոլոր
գիտութիւնները:

Բոլոր վէպերն ընդհանրապէս իրենց նիւ-
թերուն և նկարագրին տեսակէտով կը բաժ-
նուին հետևեալ կերպով.

1. — Մանուածապատ ևւ խորհրդաւոր
դէպքեր, տարօրինակ արկածներ և ոճիրներ
պատմող վէպերը որոնք ընթերցողը հեւ ի
հեւ և տենդոտ հետաքրքրութեան մը մէջ կը
պահեն ծայրէ ի ծայր և որոնց մէջ դժուար
է գտնել որոշ ձգտում մը և դրական արժէք:

2. — Դադարաւորապէս վէպերը որոնք նը-
պատակ ունին մաքուր մտածումներ ներշնչ-
ել, նախապաշարումները քանդել և աղիւ-
գադարարներ առաջ բերել մտքերու մէջ:

3. — Բնադաշտ վէպերը որոնք ժամանա-
կակից կրօնքն ու բարքերը հաւատարմօրէն
կը ներկայացնեն, իրենց լաւ և յուր կողմն-
րովը միանդամայն:

4. — Հսգերական վէպերը որոնք աւելի
մարդկային զգացումներն ու կիրքերը և հոգ-
ւոյն ամէնէն ծածուկ յուզումները կ'աշխա-
տին ուսումնասիրել և վէպի ձեւին տակ դա-
նոնք ներկայացնել իրենց ամէնէն խուսափուկ
հրքերանգներովը:

5. — Գիտական և իմաստասիրական վէ-
պերը ուր վիպագիրը գիտական ծանօթու-
թիւնները կամ իմաստասիրութեան արդի հայ-
եացքները կը ժողովրդականացնէ կամ ինչ
ինչ գիտական և իմաստասիրական տեսու-
թիւններու վրայ կը կառուցանէ իր վէպին
չէնքը:

6. — Այն վէպերը որոնց մէջ հեղի-
նակը անցած դարերու և ժողովուրդներու
կեանքն ու բարքերը կը պատկերացնէ կամ
հեռաւոր իրողութիւն մը ձեռք առնելով
երեւակայական յաւելումներով կը ձոխացնէ
և վէպի կը վերածէ:

Արդի վէպի նիւթերուն դասակարգութիւնն ընկելով այսպէս՝ նոր բաներ մը ըսած ըլլալու յաւակնութիւնը չունիմ երբեք. այլ այդ դասակարգութեան մէջ կուզէի մատնանիշ ընել վէպի այն սեւը՝ որուն մեր մէջ ամէնէն աւելի նախապատուութիւն տրուած է յոռի ընտրողութեամբ մը և որ շարժաւիթն ելած է ցաւալի վիպամօլութեան մը ճարակման:

Հիմա տեսնենք ուրեմն թէ մին է մեր մէջ ամէնէն աւելի ծաւալ դրած վէպի այդ սեւը:

* *

Տարակոյս չկայ թէ փողովուրդը կրթելու, մտաւորապէս դարգացնելու համար վէպը գրական մէկ հատիկ սեւն է, ինչպէս բացատրեցինք: Իմաստասիրութիւն, գիտութիւն ու բոլոր լուրջ և օգտակար ծանօթութիւնները վէպին մէջ ներմուծուած, ձուլուած ձեւի տակ ախորժակով կը մարտնչին և կ'իւրացուն: Ընթերցողը չի ձանձրանար, հաճելի ժամանց մը կ'ունենայ և միւսնոյն ատեն օգտակար բան մը կը սորվի: Ու ժամանակակից բարքերը նկարագրող վէպերու մէջ ևս անոնք իսկ որ մարդկային ազնիւ, վեհօգի դիքեր, կեանքին լաւագոյն եւ իտեալային կողմերը կը ցուցադրեն՝ ընթերցողներուն մէջ կ'արթնցնեն ազնիւ ձգտումներ և անոնց բարոյացման ու ազնուացման մեծապէս կը նպաստեն: Վէպին այս օգտակար յատկութիւնները կ'աճուիսէն զխտելով՝ մեր մէջ ալ կէս դարէ ի վեր սկսած են Եւրոպական վէպերը թարգմանել, հայացնել:

Ի սկզբան բաւական լաւ ընտրողութիւն կատարուած է և գլխաւորաբար Իզմիրէն, մասամբ մըն ալ Կ. Պոլսէն առանձին հատորներով ի լոյս ընծայուած են ժամանակուան ֆրանսական վիպագրութեան լաւագոյն արտադրութիւնները: Բայց երբ մեր օրաթերթերն ալ Եւրոպական թերթերուն հետեւելով սկսած են թերթօններ հրատարակել, այն ատենէն իսկ ընտրութեան ճաշակը խաթարուած է: Վէպին առթած հետաքրքրութեան չնորհիւ ընթերցողներուն թիւը աւելցնելու և դանիւք թերթին հետ կապուած պահելու դիտաւորութեամբ՝ մեր խմբագրապետները իրենց

թերթօններուն համար սկսած են թարգմանել տալ ամէնէն աւելի հեւ ի հեւ հետաքրքրութիւն շարժող վէպերը, և ասոնք եղած են ընդհանրապէս մեր դասակարգած վէպի եօթն տեսակներէն առաջինին պատկանող վէպեր ուր անլուր արկածներ և մանուածապատ դէպքեր կը պատմուին:

Ահա ուղղակի այս թերթօններուն պատճառաւ ընթերցող հասարակութեան մասնաւոր երիտասարդ դասակարգին մէջ ճարակած է վիպասարկ վիպամօլութիւն մը և ցաւալի է որ մեր թերթերը հաճոյք կը զգան այդ մօլութիւնը օրէ օր աւելի դրդելու և իրենց հաշուին շահագործելու: Վերջին տարիներու մէջ միայն մէկ թերթօն—վէպ հրատարակելով ալ չբաւականացան, մէկը երկուքի վերածեցին և այս օր ամէն օրաթերթ անհրաժեշտօրէն երկու թերթօն ունի: Ոմանք այս թիւն ալ չափազանցեցին, օրական երեք-չորս թերթօն միանգամայն հրատարակելով անցեալ տարի: Այդ թերթերու խմբագրութիւնները չէին խորհրդէ թէ այդպէսով իրենց վիպամօլ ընթերցողներուն՝ մօլքի ամէնէն սոսկալի տաժանքը կը պատճառէին, դի անտանելի բան է չորս վէպ միանգամայն կարգաւ և անշիտ ըմբռնել, և վիպամօլները անկարելի է որ մէկ-երկուքը թողէին առանց կարդալու:

Պէտք կ'այ կրկնելու թէ վէպի այն տեսակը որուն մեր օրաթերթերը նախապատուութիւն կուտան, ամէնէն անօգուտն է: Այդ տեսակ վէպեր ընթերցողներու միտքը կը պահեն յարատեւ լարուած և յոգնեցնող հետաքրքրութեան ու ջղագրգիւ վիճակի մը մէջ որ ենթակային հոգեկան normalitեն կը խանդարէ և նոյն իսկ անոնց մէջ կը ծննդէ վէպին պատկերացուցած յոռի դիքերէն և մանուածապատ դէպքերէն ներշնչուած գեշ հակումներ:

Այս տեսակ վէպերու յոռի ազդեցութեան վրայ շատ խօսուած է, բայց ցաւալի է որ մեր թերթերը մեծ մասամբ դեռ նմանօրինակ թերթօններ է որ կը հրամայեն իրենց ընթերցողներուն՝ մինչդեռ վէպին միւս ճշմարտապէս օգտակար տեսակներուն դերի մէջ ձեռք դպցնող չկայ: Եթէ անպատճառ հետաքրքրե-

բաշարժութիւն կը վնասուի՝ կարելի է լաւագոյն հեղինակներու վէպերուն մէջէն ալ վնասուել գտնել հետաքրքրաշարժները և դանոնք թարգմանել։ մնաց որ գիտական վէպերը հետաքրքրաշարժութեան կողմէ ո՛չ մէկ վէպէ վար չեն մնար։ Իմ փափաքս է որ քիչ մըն ալ գիտական, իմաստասիրական և վերջապէս կըթիչ բարոյացողիչ ու միեւնոյն ատեն գրական արժէք ունեցող վէպեր ալ թարգմանուէին որով մեր թերթերը ամենամեծ ծառայութիւն մատուցած պիտի ըլլային իրենց ընթերցողներուն։

Պէտք չէ մոռնալ սակայն խնդրոյն միւլթարական կողմերն ալ։ Արեւելք որ, եթէ չեմ սխալիր, ժամանակին ինքն է որ հրատարակած է Ժիւլ Վէռնի գիտական վէպերը, միշտ միւս թերթերէն աւելի լաւ ընտրութիւն մը ի գործ դրած է վէպերու մասին։ Մօտ տարիներու իր հաւաքածոներուն մէջ կարելի է գտնել վէպեր՝ Յր. Բօրէէն, Ալֆ. Տօմէէն, Ժիւլ Մառիէն, Զօլայէն, Կօնքուռներէն, Կիւսթավ Ֆլօպէրէն, ու դեռ վերջերս է որ լռիկ մնչիկ հրատարակեց Բօլ Պուրժէի Սիւրալիս ոնիւ մըն և Անաթօլ Ֆրանսի Կարմիր շուշանը։ Արեւելի առաջին երեսի թերթօնները գրական կարեւոր վէպեր եղած են շատ անգամ։ Միեւնոյն փորձեց նաև Բիւզանդիս երկու տարիէ ի վեր առաջին էջը գրական թերթօնի յատկացնելով։ Մասիս ալ, թէև չաքաթաթերթ, առին առին իր հրատարակած կարծ վէպերուն մէջ գեղեցիկ ճաշակ մը ցոյց կու տայ։ և արդէն հրատարակած է վէպեր՝ Բ. Պուրժէէն, Անաթօլ Ֆրանսէն, Անարէ Թէօրիէն, Բաուլ Հայդէէն, ևն։ Ուրախալի է որ վերջերս Մանգուսէալ սկսած է հրատարակել Զօլայի Թեքզ Ռաֆէնը։ Կ'արժէ յիշել նաև Բիւզանդիս որ յաջորդաբար հրատարակեց երկու ընտիր վէպեր, առաջինը գիտական վէպ մը, Առաջին մարդիկը լուսնի մէջ և երկրորդը՝ Ռօմօլա։

Փափաքելի է որ այս միւլթարական երեւոյթները յարաւունեն։ Եթէ մեր թերթերը իրենց հրատարակած երկու թերթօններէն գտնէ մէկը լաւագոյն գրադէտներու ընտիր գործերէն ընտրեն միշտ, ասով այժմէն դո-

հացում տուած պիտի ըլլան իրենց ընթերցողներու հասկցող և զարգացած դասակարգին ճաշակներուն, և միւս չհասկցող և նուազ զարգացած դասակարգին ալ ճաշակը հետը հետէ պիտի աղնուայնեն։

ՅՈՎ. ԳԱԶԱՆԵԱՆ

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

«Հայու կնիկ» Ժողովրդական բացատրութեան տակ՝ որ թերեւս հեշտ չի հնչեց չափուր ախանջին՝ կնոջական-ընկերային կարեւոր հարց մըն էր դոր յուզեց Բրիզանթ թէմ այս էջերուն մէջ։ Վէճը, — փափուկ, թեթեւ, չանկան վէճ մը, — կը շարունակուի սրամիտ հրապարակագրին ու քանի մը կին-դիողներու միջև որոնք ընական էր թէ պիտի ստանձնէին իրենց սեռին պաշտպանութիւնը։ Օր. Մառի Յովհաննէսեանէն և Օր. Էլիզ Աղէկուկեանէն ետքը, Բրիզանթ թէմ այս անգամ ալ Արեւ. Մամուլի մէջ կը պատասխանէ Սիւրիլի որ նոյն չաքաթաթերթին մէջ հրատարակած իր մէկ յօդուածով անուղղապէս ընդդիմախօսած էր Բրիզանթ թէմի պարզած տեսութեանը՝ Մասիսի մէջ՝ այս խնդրին վրայ։ Կ'արտատպենք Բրիզանթ թէմի գրութեանը (*) այն մասը որ ընդլայնումը կամ եզրակացութիւնն է իր լիքսին։

Հայուհին թէ իրրեւ մայր, թէ իրրեւ կին, թէ իրրեւ սիրուհի, թէ իրրեւ քոյր, թէ իրրեւ կեանքի ընկեր՝ մօտէն ճանչցած, սիրած, յարգած, պաշտած ըլլալու համար, տեսակ մը հեղինակութիւն ունենալ կը կարծեմ համեստաբար և ինչ ալ ըսեն՝ կարող չպիտի ըլլան դաւանանքս փոխել տալու և չեմ յիշեր քանիբարորդ անգամ ըլլալով կըրկնելու թէ՛ հայ իդական սեռին մէջ հարիւրին ինքնուրուի հնչող այն ախպարներն ևն զորս «Հայու կնիկ» ոչ-փաղաքուշ բացատրութիւնով որակած ենք ես, դու, ան։

Անտանդիլ պիտի ըլլար եթէ վերսկիւնի նկարադրել ձեզի այդ type-ը։ Բայց թո՛ղ

(*) Արեւ. Մամուլ, Թ. 16, ապրիլ 19։

ներուի այս անգամ ալ ինծի, դրական օրինակով մը միտքս բացատրել :

Հայու կնիկը ամենէն հիմնական առաքինութիւնները ունի : Խնդրի է ան, բարի, գեղեցիկ, պարկեշտ, աշխատասէր, խնայող, հաւատարիմ. Հայու կնիկը կատարեալ մայրն է, կատարեալ ամուսինը, կատարեալ քոյրը, բայց ասոնց հետ մէկտեղ ամենէն անկատար կիներն է : Բառարանին ամբողջ աղէկ նշանակութիւն ունեցող ածականները կրնանք տալ իրեն՝ բաց ի մէկ հատէն, հրապուրիչ ածականը :

Մօտաւորապէս երկու միլիոն հայ կիներու մէջ 100 կամ 200 հատ իրաւոյնէ հրապուրիչ կիներ կան եղեր, merci, այդ սկզբունքով ուրեմն ամէն Հայերը հարուստ են որովհետեւ Մանթաշօք մը ունինք եւ կամ ամեն հայերս գրաւաւ գիտենք՝ որովհետեւ Գուրգէն ոսկեղարու լեզուն կը քէն ու կը քէն :

Ինքնախաբուծեան տեղը չկայ եւ ճշմարիտ գրականութիւնը այն է որ համայնքի մը պակասաւոր կողմերը ցոյց կու տայ եւ զանոնք սրբագրել իր բանը գործը ըրած է :

Իտալուհին, Հելլէնուհին, Սնդուհին, Ֆրանսուհին, մէկ օրուան մէջ չեն եղած այն հրապուրիչ էակները որոնց վրայ կը հիւսնանք մենք՝ էրիկ մարդիկս :

Դարերով եւ դարերով մեկան թափուած է՝ իրենց այդ հմայքը տալու համար. որքան կծու քննադատութիւններու եւ ի՛նչ հեղինոյ քաջքատուքներու ենթարկուած են արդեօք իրենց արդի վիճակին հասնելու համար :

Առաջին անգամ որ կը փորձեմ խնդրոյ նիւթ ընել Հայուհին, ամենքը մէկանց վրաս կը թափին, անաթեմայ կը կարդան, կ'անիծեն զիս իբրեւ թէ Եփեսոսի տաճարը ես այրած ըլլայի : Բայց հոգ չէ, անուշա օրին մէկը Յիսէային մէջ՝ ես ալ տեղս պիտի ունենամ... եւ Քրիզանթեմի Գախալկային...

Թէ ի՛նչ կը պակտի հայ կնոջ «Հայու կնիկ» չըլլալու համար, շատ պզտիկ բան մը, ոչինչ մը որ ամեն բան է սակայն : Հով մը, չգիտեմ ինչ մը, vernis մը, fini՜ն, du gbel-ghelը, ինչպէս կըսեն Իզմիրցիները :

Օրինակ մը :

Ասկէ՛ տաք տարի առաջ, Շիլլի՛ գուլպայի

դործարան մը հաստատեցին քանի մը հայ գաւառացիներ որոնց գրադիրը եղայ ժամանակ մը, ուրկէ՛ կատարեալ գիտակցութիւն մը անցած դարձածին վրայ : Ամենէն կատարելագործեալ մեքենաները բերել տուինք Եւրոպայէ, ինչպէս նաեւ ամենէն մարդուած գործաւորներէն քանի մը հատ : Եւ գուլպաները չինուիլ սկսան : Գործարանին արտադրութիւնը պարզապէս հիւսնալի էր հիւսուածքի, ճաշակի եւ տոկոսութեան տեսակէտով : Շրտակը այդքան կատարելութիւն չէր սպասուել :

Մէկ կողմէ գուլպաները չինուեցան ու չինուեցան : Պէտք եղածները ամենքն ալ պատրաստ էին՝ մեր գուլպաները հրապարակ հանելու համար :

Եւրոպայի դօմիտիօնները պարզապէս épâté եղան մեր արտադրութիւնները տեսնելով :

Արդէն չինուածները արդուկուեցան, ծալուեցան, կապուեցան գոյնզգոյն ժապաւէններով. մինակ տուփերու մէջ դրուելու էին ծախու հանուելու համար :

Մինչեւ այդ վայրկեանին Օրօդաի-Պախն անգամ պիտի վարանէր տեղական այդ գուլպաները Եւրոպայէն եկածներէն դանաղանելու համար, այնքան յաջողուած էին անոնք :

Բայց, օ՛ դժբաղդութիւն, հոս դարձուցին հոն դարձուցին, մէկ կերպով չի կրցան տուփերուն մէջ տեղաւորել զանոնք, ինչպէս են եւրոպականները :

Այդ ծալուածքին եւ այդ կապուածքին մէջ mastoc բան մը կար, աչքի գէշ դարնող. Եւրոպայէն եկածներուն չիքը չունէին, անոնց հոլը :

Նոյն իսկ այդ տուփադրութեան դործին համար աղջիկ գործաւորուհիներ կանչեցինք, նորէն չեղաւ :

Մեր գուլպաները ամէն առաքինութիւնները ունէին—եթէ երբեք գուլպաներն ալ առաքինութիւն կրնան ունենալ—սակայն վերջին ճիւղ կը պակսէր իրենց եւ այսպէս ալ եղաւ մինչեւ ետքը : Ատոր համար Ֆապրիքան գոցուեցաւ : Այսպէս ալ մեր կիները ունին ամենէն հիմնական առաքինութիւնները

բայ ի այն չգիտեմ ինչէն որ բանի մը *finir* է, *finir* ան, *finir* :

Գիտնալով հանդերձ որ շատերուն աչքին դէշ պիտի երևանամ, մանաւանդ Սիպիլին, չպիտի կրնամ երբեք դադարիլ կրկնելէ թէ ժամանակները չեն ներեր այլեւս որ հայ կիներ շարունակէ ըլլալ ինչ որ էր մինչեւ հիմա : Նըրբացումը որ մեր բարքերուն մէջ մտաւ, դեղեցիկին ճաշակը որ ամենուս քով քիչ շատ կայ, Եւրոպացիներուն հետ մեր շարունակական յարաբերութիւնները կը պահանջեն որ այսուհետեւ մեր կիները աւելի չիք ըլլան, աւելի կենցաղագէտ, աւելի հրապուրիչ :

Ֆիզիքական գեղեցկութիւնը, քանի մը լեզու խօսիլը, դաշնակ զարնելը, ծանր, սուղ արդուդարդեր ունենալը բաւական չեն կին մը հրապուրիչ ընելու համար : Ծարժումքի, նիստ ու կացի անանկ տղեղութիւններ, անանկ փոյտութիւններ կան որ կը դանդաղեն զքեզ նոյն իսկ ամենէն գեղանի կը նոյնին :

Անճական յիշատակ մը : Պոլսոյ մէջ գիշեր մը հրաւիրուած էի ջոջի մը հայկերոյցիին : Ընչաւ քովս նստած էր Տիկին * * * որ մայրաքաղաքին ամենէն գեղեցիկ կիներէն մէկը ըլլալու համար ունի : Հարուստի մը աղջիկը ըլլալէն ետքը, հարուստ սեղանաւորի մըն ալ կինը եղած էր : Մէկ կողմ ձգեցէք որ ոչ դանակին գործածութիւնը դիտէր եւ ոչ ալ սրտառաքաղին, բայց *comble* հոն էր որ, պտուղի միջոցին նարինջ մը սկսաւ ստիլել . . . ձեռքով եւ ամէն անգամ որ քսումով մասնակին ի վար կը վազէր, իր նուրը, կրծակէլիք շրթներովը կը լղուռուէր դանոնք : Հմայաթափութիւնս կատարեալ եղաւ այդ սեւաբանին առջեւ եւ թերեւս այդ օրէն միտքս դրի «Հայու կնիկ»ը գրելու :

Ուրեմն, Տիկիններ, մի՛ բարկանաք, եթէ քիչ մը կը ծանրանամ եւ կը շատախօսեմ այս նիւթին վրայ : Հոգ չէ, այդանցէք զիս, անիծեցէք, քաշքեցէք, բայց, յանուն Աստուծոյ, մատուցնիդ մի՛ լղէք : Ընկերական ամէն պարագաներու մէջ, կեանքի ամէն վայրկեաններուն, եւթագրեցէք թէ աղջիկ-սեսի կ'ըլլէք կոր եւ այնպէս մը վարուեցէք որ գիմայինիդ ըսէ—«Ինչ չնորհալի կին է» :

ԴԵՐԵՋՍՆԹԻՍ

ՅՐԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ

ԲԱՆԳՈՒՆԵՐՈՒՆ ԲԱՆԳՈՒՆԸ (1)

Վերջերս Բարիդէն ստացայ քերթուածն Երու. Նոր հատոր մը (*René Ghil.—Le Pantoun des Pautoun, poème Javanais Paris-Batavia*) : Ռենէ Կիլ, Յրանացի բանաստեղծը, որ *instrumentiste* (2) գրական դպրոցին պատնէ, յաջողած է շատ կատարելութեամբ՝ իր փոխ առ փոխ հնչուն, մեղմ, թրթռացող ու ձուլը անօրինակ ներդաշնակութիւն մը տալ Ճավայի կեանքէն առնուած բանաստեղծութեանը : Առ այժմ չպիտի խօսիմ հոս իր լեզուին վրայ որ շատերուն անհասկնալի ըլլալուն համար կարգ մը *technique* բացատրութիւններ կը պահանջէ. ինչ որ ապահովաբար կրնանք ըսել թէ անոր անգիմաղդրելի հրապուրչ է, որ նախ սքոզուած՝ ինչպէս եթէ դեռ չբացուած ծաղիկ մը ըլլար, յետոյ հաջող է եւ դերադանցապէս առնական՝ տարաշխարհիկ ու անծանօթ երգի մը պէս :

Անոնք որ չպիտի հասկնան զայն, *tant pis pour eux*. Հասկնալը ընթերցողին կողմէ անսխալ անկարողութիւն մըն է եւ այդ իբր պակասութիւն պէտք չէ բեռնել հեղինակին վրայ : Երբ Ռենէ Կիլ իր գեղեցիկ եւ բազէն արեւցած՝ իր երգող սողերը դարբնած է, բնաւ չէ խորհած թէ ընթերցողը ինչպէ՞ս պիտի ընէր զայն հասկնալու համար :

Ռենէ Կիլ՝ վեհանաճն եւ հզօր սկզբունքներով շխտակ անսայթաք կը քալէ իր դժած ճամբուն մէջ : Իր նոր գործը անհուն ճիգ մըն է դէպ ի գեղեցկութիւնը եւ այն վիթխարի աշխատութիւնը որ ինքզինքմէն պահանջած է զայն՝ պատրաստելու համար՝ բոլորովին կ'եւրաշխաւորեն իր անկեղծութիւնը :

Քերթուածը կը սկսի երգով մը ուղղուած Ճավայի պարուհիին. անոր պարզ եւ խօսուն

(1) Ճավայի մէջ հին բանաստեղծական ձեւ մը :

(2) Մօտերս առիթ պիտի ունենանք յուրադրել այդ գրական դպրոցին սկզբունքները եւ անոր ազդեցութիւնը նորերու վրայ :

պարը որ մասներու նշանական շարժումներու մէջ կը կայանայ, նուրբ և ճկուն հրապրոյ մը ունի. անոր մասները «որ կը ծխւրին տանջուած բառերէ զոր չէ կարելի արտասանել»:

«Անուշ, ինչպէս որիզները լոյսով թաթխուած, քու աչքերդ պիտի շողան բանդունին մէջ որ չի հինար: Ո՛վ դուն, պղտիկփոյր, որ դէպ ի արեւմուտք եկար պարելու և համարձակելով քանդել ուղուած ձեւերուն արձակ շարժումը և նշանները որ քեզի ունայն ևն, ժպիտի և շարժումի անհունութեան մը մէջ դուն կը թուէիր ըլլալ բրահուի⁽³⁾ մը մէջ հասնողը—վարդագոյն բաւականներուն⁽⁴⁾ մէջէն որոնցմով ջուրը կը քնանայ երբ արեւին հեղուկ րոպէն կը մարի—կը թուէիր ըլլալ բրահուի մը մէջ հասնող դէպ ի ոսկի քուհանը⁽⁵⁾ քու ոսկեղէն դիւերներուդ»:

«Ո՛վ դուն պղտիկփոյր որ եկար, պարուհի, քու թուշ աւելի քաղցր է քան արմաւենիին բուրմունքը և որուն խօսուն մատները,—նման ոտներու որ կը նուազին սերէ ծանր արեւին տակ—կը ծխւրին տանջուած բառերէ զոր չէ կարելի ըսել»:

Կը տեսնենք որ տարաշխարհիկ պարմանուէին դէպ ի արեւմուտք կ'երթայ իր մատներուն առեղծաածային հանդոյցներով սիրտերը կապելու. եւ հոն կը տեսնայ թուհանը որուն աչքերէն սէրը իր արիւնին մէջ կ'անցնի. և իր դեռ մանկական հոգիին խռովքը կ'երգէ հասկալուած երբեմն հեռաւոր ձաւաճին կարօտով:

«Ճալա, չառ համր լեռներով, Մեծ կղզի ձալա, ուր սիրամարգներուն ներքեւ Տիաթիներուն⁽⁶⁾ ճիւղերը կ'երկնաբանդեն մաքուր միջոցը՝ ինչպէս ծիածանին շողեղէն, արշալուսային երանգը, փոթորիկէն ետքը, օդի կալաւիներու մէջ կ'աւետէ նոր արեւը...»

«Ճալա՛, որուն լեռները կը ճնշեն իմ չունչս...»

«Ճալա՛, աւելի կարօտալի շրթունքներուն քան սիրելիներուն չունչը»:

(3) Ճալայական նաւակ:

(4) Վարդագոյն կամ կարմիր լոթիւս:

(5) Տէր, պարոն (պատուոյ իմաստով):

(6) Ծառ մը որ կը կոչուի նաեւ քեֆ:

Բայց թուհանին սէրը դեռ շրթունքներուն վրայ և անոր նայուածքը աչքերուն մէջ, պէտք է մեկնիլ, «պարուհին, որուն այնչափ նուազիկոտ մասները կը քակուէին, կը կապուէին, մեկնեցաւ... և ամէն բան երէկ եղաւ և դիւեր, երէ՛կ... երէ՛կ...»:

Հիմա ծովին վրայ հորիզոնները կը հեռանան, արեւմուտքը կը խուսափի և ոսկի երազը նաեւ պարուհիին:

«Բայց ելիր կամրջակին վրայ, գլուխդ որ կը քնանայ այլ եւս չես գիտեր ինչ նոր կարօտով մը երկնցո՛ւ դէպ ի քու երեք քոյրերուդ որ սարսուղով կ'արթնանան:

«Տեսէ՛ք Աէլանը՝ որուն երկիրը կարծես կը շողշողի լուսինէն և Հնդկաստանի արեւէն և օդէն կը սնանի»:

Ու հզօր սողերու մէջ ուր բնութեան տարրերուն պայքարը կը լսես կարծես՝ տանջուած անբացատրելի մորմօքէ մը՝ ինչպէս փոթորկալից դիւերները, ճամբորդութիւնը կը յառաջանայ. և քանի առաջատար կը դիմէ դէպ ի ձաւա՛ այնքան «մրկալի օդը կաթի համ ունի և նաեւ փշապատ տուրհնի⁽⁷⁾ որ դեռ կանանչ է»:

«Մեծ գուռացող որոտմունքները կը խօսէին առիւծներու պէս դէպ ի Սինկաբուր... արեւմուտքի հովը կ'անձրեւէր տանըմէկէն քորդ ամսոյն, արմաւենիներուն վրայ և միջոցին մէջ մերկ թռչող—ձուկեր յուզմունքէ իրար զարնուելով կ'երթային՝ խանդաւորուած փոթորկալի օդէն»:

Վերջապէ՛ս ձալան. հիմակ անոր ծովներուն մէջէն կ'երթան եւ կարծես թէ կղզիները կը յառաջանան մեղմօրէն լողալով:

«Կապտորակ մանիշակագոյն լեռները կուգային և սահմանեցին վերադարձը. պարուհիներուն ամենքն ալ ձալան գտնալով իրենց մասներովը կուլային և կը խնդային և զանոնք կուղղէին նաեւ դէպ ի ֆերաբանի⁽⁸⁾ ընկոյզները տունին ետեւ... վերը, եօթը քալային գլուխով, նախա՝ կուցուցկիներու⁽⁹⁾

(7) Փշապատ սլոտի մը:

(8) Ծառ մը որ չառ յարգուած է և պաշտպան համարուած:

(9) Հրաբխային լեռ:

հեռաւորը տարածուած ճալացի վրայ, աստուածային հաճութեամբը կը նուաճէր Պաթալիան»։

Ու մէկէն տունին կարօտը կը գրաւէ բոլորովին պարուհիին սիրտը և պազարը ուր երկայն դօտիններ կը ծախեն իրենց մետաքսեայ թեթեւութիւնով պարուրելու համար հասակնին, ուր կուտեն քաղցրագոյն պտուղները լեզուի յամր շարժումներով ուելի երկայն ճաշակելու համար. բայց քերպանի պաշտպանող հովանիին տակ քոյրերը իրարու քով նստած կը կարեն. ու հեռաւոր յիշատակները կուզան երգելու մեղմիկ, չափաւորելու համար իրենց ճկուն մատներուն աւրազութիւնը։

«Գիտե՞ս... այն ոսկեղէն գիշերը... որուն համար մինակ կը պարէիր. Բարիդի մէջ... որուն աչքերը երազելով քեզի ըսին... Աւաղ... երթաւ բարով։ Սնցեալը կը պարպուի և կը մեծնայ մեր շուրջը...»

«Գիտե՞ս... թէ հիմա անիկա կը յիշէ... Գիտե՞ս քու աչքերուդ քուհանը որուն համար միայն կը պարէիր դուն և որուն երազը Խոսեւ և անուշ է քեզի համար։ Գիտե՞ս...»

«Բայց իմ Ժալիտի մէջ տխրութիւն չկայ, բայց իմ տխրութեանս մէջ ցաւ չկայ»։

Պաշտպանի պարզութիւններ կան երբեմն երբ մայրը անհանգիստ իր աղջկան վրդովմունքէն կը հարցնէ. «Որո՞ւ կը Ժալիտ»։ և կամ «Ատենէ մը ի վեր հեռու նայելով կուլաս. բայց ինչո՞ւ համար կուլաս»։

Քանի ժամանակը կ'անցնէ՝ այնքան պարուհիին մասնները նոր պարերու տենչանքովը կը կապուին թուհանին, բայցատրելու համար իր սրտին հրաւրքը. բայց արեւմուտքի հորիզոնը շատ հեռու է այլ եւս և ճալացի պտուղները կը դառնանան իր բերնին մէջ. անիկա միշտ կը սպասէ թուհանին և մէկէն մեծ պատրանք մը իր երազող հոգին կը Խոսեւ փէ տարապայման հրճուանքի մը մէջ։

«Բայց քուհանը եկած է։

«Այո՛ եւ հոգին այլ եւս բառի մը հեծկրկանքն է որ ակունքներուն խոնաւ մահուանը մէջ կ'եղնէ. և կը նուազի... բայց դաղը անձրեւին տակ ուր սու աչքերը կը լողան... երեսիդ ոսկին լայն արցունքներով վերադարձող արեւն է շողջողուն։

«Քունքս քունքիդ վրայ սեղմած, մտիկ ըրէ, երջանի՛կ»։

«Բայց մեր ևս դուն... Աղջիկներ, որոնց աչքերուն ծաղիկն մէջ զթութիւնը սարսուռայ... վերցուցէք ձեռքերս ծոնդերուս վերայէն ուր կը ծանրանան մեծ դժբաղդութեանս մէջ, այն ատենէն ի վեր որ իմ երեսս մութին մէջ մերկ է իր նայուածքէն... Ոչ, քուհանը չէ եկած»։

Անտարակոյս պէտք չէ կարգաւ այս քերթուածը կանխակալ և անիրաւ դժացումներով. անիկա երգ մըն է յուզմունքներով և խռովքով զեղուն. երգ մը հեռաւոր և անծանօթ մեղի համար, բայց որուն անսահման ներդաշնակութիւնը կը պարուրէ հոգին իր թանկագին հրապոյրովը. հոն անտի բառեր և արդէն ծանօթ պարբերութիւններ չկան. անիկա մեր բոլոր դժայարանքներուն մէկէն կը խօսի. երբեմն մեղմ և օրօրուն՝ ան սիւքին հանդարտ զնայքը ունի քերպանի պաշտպան տերևներուն մէջէն կամ ջրային լժիլումներու քնքուշ վարդագոյնը ու պանաւնին հիւթեղ անուշութիւնը. և երբ պարուհին իր զիւթիչ մատներուն երգը կ'երգէ, մտիկ ըրէք զինքը...»

ԶՍՊԵՂ ԵՍՍՍԵՆ

ՕՐՈՒՄՆ ԼԱՐՅԸ



Օրուան դրաղխտական հարցերը առատ են, բարեբաղդաբար։

Էն նուաղ կարեւորներէն չէ հետեւեալը՝ զոր կին հրապարակագիր մը մէջտեղ հանեց անցեալ օր, այսինքն.

— Որո՞նք են այն (երեք գլխաւոր) յատկութիւնները զոր պիտի վնուէր այր մը իր կնոջ վրայ, և որո՞նք՝ զորս պիտի ուղէր տեսնել ամէն կնոջ վրայ։

Հայ կնոն՝ որ կ'ուղղէ այս հարցումը մեր հայ հասարակութեան, քաղած է զայն դաղդիտական թերթերէ, որոնց մէկն ալ, իր կարգին, քաղած էր զայն անդդիտական թերթէ մը։

Սպասելով որ մեր այր գրագէտները կամ զրադէսայրերը պատասխանէին, ոմանք իրենց բուն փորձառութեանը, ոմանք իրենց

կրեւակայութեանը համեմատ, Մասիսի խրմազբութեան կը խրկեմ՝ իբր նմոյշ հրատարակելու համար՝ հետեւեալ յօդուածը, անգլիերէնէ թարգմանելով ։

Բնականաբար՝ իրարմէ տարբեր են Հայուն և Անգլիացիին գաղափարականը՝ գաղափարային կնոջ վրայ ։ Այս պատճառով, թերեւս ճշգրտութեամբ չըմբռնուի սոյն յօդուածը՝ հակառակ իր պարզ ու կտրուկ ոճին ։ Անգլիացիին դրական է՝ նոյն իսկ գգայման խնդիրներու մէջ, իսկ Հայը յաճախ երազող է՝ նոյն իսկ շատ դրական հարցերու առջեւ ։

Ամէն պարագայի մէջ, խնդրուած պատասխանին նմոյշն է զոր կուտանք այսօր ։ Կարելի է հետեւիլ անոր ձեւին, եթէ ոչ իմաստին ։

Գ. Մ. Ս. Ս. Ս.

ԳՍԼԱՓԱՐԱՅԻՆ ԿԻՆՐ

(THE IDEAL WOMAN)

Գաղափարային կինը այն կինն է որ չունի գաղափարական (ideal) ։ Անոր հետ կենսականութիւնը դիւրին է ։ Կ'արժէ անոր համար ապրիլ ։ Կ'արժէ անոր համար մեռնիլ ։ Ան' բարձր լոյսն է որուն տակ մարդկութենէն անուի կը հանուի, մարդն ըլլալով անուիս ։ Մարդկային կեանքի շէնքին վրայի լուսամուտն է ։ Ան' պատմութիւն (history) չունի ։ Չունի սուտ պատմութիւն (story) ։

Ան' փողոսկրեայ պղտիկ հարին (plectrum) է՝ որ մարդուն սրտին թելերուն վրայ դարնելով երաժշտութիւն կը յօրինէ ։ Ան' բութակն է (clef) որուն միջոցաւ մարդը յարատեւ նոյն ձայնին (tune) մէջ կը պահուի ։ Դաշնութիւնն է (rythm) որ բանաստեղծութեան կը կերպարանափոխէ կեանքի արձակը ։ Ան' պատշաճ գլխարկ կը դնէ ցերեկոյթներուն մէջ ։ Այնչափ ճարպիկ է որ չխօսի կիներուն իրաւունքներուն վրայ, ձեռքովը կ'առնէ զանոնք ։ Կը հագնի զգեստներ՝ որոնց դոյնը կը յարմարի մաղերուն, չնրկի մաղերը՝ զգեստներուն դոյնին յարմարցնելու համար... ։

Ան' Սփինքսն է որ կը ծիծաղի նեղութիւններուն վրայ՝ զոր գիտնականները կը

քաշեն լուծելու համար Բուրգերուն գաղտնիքը, մինչդեռ ասոնց տակ պահուած ստալիով պիտի կարենային գործ մը ընել ։

Ան' դարնան առաջին օրն է, մեղմաշունչ հովով մը՝ որ կը փչէ Հարաւ—Արեւմուտքէն, Հարաւով, ոչ թէ Հիւսիս—Արեւելքէն, Արեւելքով ։ Մանիշակն է որ կ'արթնայ դարնան առաջին օրը ։ Հոգւոյն մէջ՝ շուշան մըն է, բայց սրտովը՝ վարդ մը ։ Երգն է սորդիկ թռչունին (գաղ. grive) որ տեսանելի եղաւ ։ Լուծիւնն է՝ որ կը յաջորդէ սոխակին երգին ։

Ան' քսան կերպով շարել գիտէ կերակուրի սեղանին ծաղիկները ։ Կ'ատէ կանթեղներու վրայ դրուած դոյնդդոյն լուսամփոփերը (գաղ. abât-jour) ։ Գիտէ թէ ինչպէս պէտք է ընտրել եղան միտի հիւթեղ կտոր մը ։ Կը խնդայ երբ ձկնալաճառ կ'ընր գիտցածը կ'ըսէ վահանաձուկին վրայ ։

Ան' չկրնար տարբերութիւնն գտնել անասունաձին, անհաւատին, գաղնապաշտին (II) (agnostic), և պարկեշտ թերահաւատին միջև ։ Գիտէ թէ ընաւ տարբերութիւն չկայ այն կնկան՝ որ ինքզինքը պճնասէր (smart) կ'անուանէ, և այն կնկան միջև՝ զոր գոհնիկ կ'անուանեն պատուաւոր մարդիկ ։ Անկեղծութեամբ կը փորձէ հասկնալ կատուններուն միտքը, և կատունները կը հասկնան իրենը ։ Լեցուն է նախապաշարունակերով՝ որոնց բոլորն ալ շատ արդարացի են ։ Չկարծեր որ իպոէն այնչափ շատ կարեւորութիւն ունենայ՝ որ արժէր արհամարհել դայն ։ Ան' կրնայ աղցան մը չինել, և չդրեր chaperon բառը, (կնկան գլխարկ) վերջնադիր «e»ով մը ։

Ան' իր հիւրերուն ժամը 5,30ին չհրամցներ թէյ մը՝ որ 4,15ին պատրաստուած էր ։ Չըսապակեր իր ամուսինին՝ եթէ սա իր clubին մէջ մինչեւ ժամը 1 (կէս գիշերէն ետք) անգիմադրելի կերպով թուղթի բռնուած է poolը (ֆիլ վիթի) չահելու համար ։ Առտուները՝ կուի չհաներ ամուսինին (գերմանական բացատրութեամբ stürmische Bewegungen) ։ Կ'օգնէ իր ամուսինն որպէս զի սա կարենայ չինել աղագայ մը ինքն իրեն համար, և երբեք չաչխաաիր անոր՝ անցեալին մէջ բան փնտռելու ։ Ան' գիտէ թէ երբ,

կնոջ մը համար, այրերը կ'ըսեն թէ աղուոր կերեւայ, ըսել կուզեն թէ աղէկ հագուած է:

Ան' միշտ աղէկ կը հագուի, նոյն իսկ երբ Ռէյնլակ(*) երթայ: Մէկ վայրկեանի մէջ կը բայատորէ կնոջ մը հագուստը՝ զոր այր մը կէս փախէն պիտի բացատրէր և անձիւտ կերպով: Գիտէ Լուի Սէզլի և Լուի Քաթօրլի փամանակներուն ճաշակի տարբերութիւնը, և անոր համեմատ կը կարգադրէ իր տան կարգուսարքը:

Ան' իր ամուսնին սնդեւելով չկերցներ վարունկով հացի կտորներ՝ իր զուարճութիւններուն մէկէն մնացած: Օտարներուն համար՝ լիզասկիցութեան ուրիշ նիւթեր ունի և անոնց չպատմեր իր սպասաւորներուն յանցանքները: Բարի բնաւորութեան տէր կնոջ համբաւը կը ջանայ չահիլ տարբեր միջոցներով, և ոչ նախատեսելով այրերուն խելքը՝ անոնց ըսելով թէ այն ինչ կիները աղուոր կերեւան, երբ այնպէս չեն: Սիրտ չհատցներ այն կիներուն համար՝ որոնք զինքը յուսահատեցնելու չափ աղուոր կերեւան:

Անոր բնութիւնը՝ առատութեան տարիի մը զուարթութիւնն է: Չհաւատար թէ սրամտութիւնը այնպիսի տարր մըն է՝ որ չկարենայ պատշաճ կերպով ցուցուիլ: Իր բուն սրամտութիւնը թաւիչի պէս է (velvety): Ան' ձիւտ առեւնին ելած է դպրոցէն. չափազանց ուշ հանած չեն զինքը, և ինքզինքը կը նըկարագրէ՝ կրակէն աղատած խանձող մը (լուսնածած վայր):

Ան չպատճառաբաներ: Կը սիրէ: Չհաւատար թէ այր մը կրնայ սիրել միայն մէկ անգամ, կամ միայն մէկ կին: Ինքն իսկ նախամեծար կը սեպէ շատ սիրել, փոխանակ շատեր սիրելու: Կը հաւատայ թէ առաջին կինը սեպածու արձանագրութիւն մըն էր, և թէ իւրաքանչիւր կին եւայի միայն մէկ «ճըմլուածն» է (squeeze): Գիտէ թէ այդ արձանագրութեան դադանի բանալին սէրն է: Գիտէ թէ ամէն ճշմարիտ կին գաղափարային կիներն է, վասն զի իրողութիւնը այն է թէ Գաղափարային կնոջ ամէն մէկ գաղափարը

կախում ունի դաղափարադաշտներուն դնահատումէն, և թէ ամէն կին որ կը պաշտուի՝ կը գաղափարականացուի:

Usnrwqrnrphn F. Frankfort Moore
«Pearson's Magazine» Թիւ մարտի 1903
Թարգմ. Գ. Մ.

«ՌԱՐԻՒՆԻ ՅՈՒՇԱՅՆՏԵՐԸ»

Գ. Պուպլի Էֆ., Իդմիրցի ծանօթ փաստաբանը, որ պահ մը աշխատակցեցաւ մեզի՝ շարք մը յօդուածներով՝ Պոլիս դանուած թուականին առաջարկեց որ Բարիֆին Յուշեստը վերնագրով գլուխ մը բանանք Մասիսի մէջ, հոն արձանագրելու համար մարդասիրական ամէն կարգի նուիրատուութեանց լուրերը, իրերեւ յոտակ և որոշ վիճակացոյց մը հանրային բարեգործութեան: Այդ գլուխը եթէ բայած ըլլայինք, ապահովապէս անոր ամէնէն ճոխ էջը պիտի լեցուէր այս Ապրիլ ամսուն մէջ, ուր՝ իրարմէ տարբեր եղանակներով մեծկակ բարեգործութիւններ ծանուցանելու սուիթը ունեցանք յաջորդաբար: Այս անգամ, Ս. Փրկչի Հիւանդանոցն է որ կը նպաստաւորուի 2200 ոսկիի նուէրով մը, որուն 1000 ոսկին հնչուն դրամ և մնացեալը՝ 1200 ոսկի արժողութեամբ երկու տուն Գոտը գլուղի մէջ: Նուիրատուն, այրի Տիկին Պ. Շիլմանեան, բարեպաշտ և առաքինի հայ խաթունի տիպար մը, երկու դաւակ ունեցած էր՝ աղջիկ մը զոր ամուսնացուցած է և երկու տասարդ մը զոր 23 տարեկան հասակին մէջ կորսնցնելու դժբաղդութիւնն ունեցաւ անցեալ տարի: Իր անձնական ստացուածքէն ինչ որ այս վաղամեղ դաւկին բաժինը պիտի ըլլար՝ նուիրելով Հիւանդանոցին, հոգեւոր միջնորդութիւն մը կը դոնէ այս բարի տիկինը: Երկու տուները, ըստ օրինի, Հիւանդանոցին վրայ կը դարձնէ, իսկ դրամը վագֆ ըրաւ Շէրիի դատաւորին առջեւ, պայման դնելով որ դրամագլուխն անձեռնմխելի մնայ և սուկոսը գործածուի Հիւանդանոցի ընթացիկ պէտքերուն:

(*)Տըպլինի մէկ արուարձանը

ԻՆՉԱԿՆԱ ԿՐ ՉՐԵՄ

Ինչպէս կը գրեմ.— մասիսով բարակ՝
Ծուռն մը քուղիի քրած հար հարակ,
Կանուլա յոյս այգուն, պատուհանիս մօտ,
Պատմելով հոգւոյս յոյգերն ու կարօտ:

Չունիմ գրեմունք. հորիզոն մը լայն
Կապուտակ ծովեր, բրնձուրիւն համայն
Բաց հասորներս են. սեւ բուրի վայեր՝
Լացող յանկերգներ զիս չեն հըմայեր:

Ինչպէս կը գրեմ.— միշտ նոր հանդիպ
Ներք բարի մուսան նսած է իմ հով.
Տեսում կամ զուարթ՝ անոր ներշնչման
Կը ջանամ ըլլալ հարազատ քարգման:

Ան խոյս տաւ ինձմէ ձմեռը քեպէս՝
Գարնան կը դառնար ծիծեռնակին հետ.
Բայց փափուկ սեռին պչրանքէն ան է
Կախարդուած հիմա ու զիս լրբանէ:

Ինչ հրապոյր ունի շողող ու խրքին
Շարքը՝ բառերու իմաստով մըքին,
Կամ սիրուն յանգով՝ «անդուն» ու «անգոյր»
Յօրինել փունջեր գողտիկ՝ Բայց անբոյր:

Ինչպէս կը գրեմ.— ժպտով ցանուցիւր
Ներգելով կեանքին երազներ պատիւ,
Արցունքներ սրբեմ վարդի քերքերով
Ու արեւս դնեմ կաթիլ մը գորով:

12 Ապրիլ 1903

Մ. ԱՃԷՄԵԱՆ

ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

Շերամարումուքիւնը հետզհետէ Թուրքիոյ մէջ ծաւալելուն պատճառաւ՝ կը յուսամ թէ Մասիսի ընթերցողներէն շատին համար օգտակար պիտի ըլլայ հետեւեալ յօդուածը զոր Թարգմանօրէն կը խրկեմ Ձեզի՝ խնդրելով որ հաճիք հրատարակել:

ՀԱՄԵՆ Թ. ԹԷՐԱՅԵԱՆ

Քննիչ շերամաբոյծ Օսմ. Համբ. Պարսուց.

ՄԵՏԱԳՈՒՆ

ԲՆԱԿԱՆ ԳՈՒՆԱՌՈՐՄԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Խողակները կ'ըլլան դեղին, կանաչ եւ ձերմակ: Այս դանաղան դուռաւորմանց ծագումը ուրիշ է:

Միջատաբաններ (entomologistes) ինչպէս Ալեքսանտրինի ժօլի, Ռ. Տիւպուա եւայն, սա կարծիքը յայտնած են, որ ընդհանրապէս ընդունուած է, թէ այս դուռաւորիչ նիւթը ամբողջապէս որդէն հայթայթուած է: Իսկ ուրիշներ, ինչպէս Պօնաֆօ, Պլանչար եւայն, ընդհակառակը կը վերագրեն զայն մետաքսին թելերուն թելահանէն ելլելու միջոցին աղ-

տոտուեցուն։ Այս ենթադրութիւններէն որը ճիշտ է։ Պ. Պ. Լըվրա և Ս. Գոնթ, Լիճնի միտաքսադործական հետազոտութեանց ձեռնարանին ներկայացուցին այս վիճաբանութեան տակ մնացած խնդրոյն վրայ իրենց փորձառական ուսումնասիրութեանց արդիւնքները։

Այս ուսումնասիրութիւնները կատարուեցան վայրենի ցեղի մը վրայ (l'Attacus Orizaba) և երկու տեսակ Bombynmori կոչուած խողաներու վրայ, մէկը ճերմակ մետաքսով՝ միւսը դեղին մետաքսով։ Attacus Orizabaէն խնդրութեանը, զորս ծնած ժամանակէն ի վեր չեղճ կարմիր ջրոտ լուծմամբ բռնուած տերեւներով անուցին՝ կանոնաւորապէս զարգացան, իրենց մարմինը մոյգ կարմիրով ներկուեցաւ և թեւհանէն ելած մետաքսը վարդագոյն էր, ամբողջ խողակը դեղեցիկ կարմիր գոյն մը ունէր։

Նոյն խումբէն երկու թրթուրներ չորրորդ մորթափուլութեան միջոցին մեկուսացուելով՝ երբ երկրորդ տարիքին հասան, բնական տերեւներով անուցուելով կամաց կամաց գոյններնին փոխեցին եւ անոնց տուած մետաքսը հաղիւ բաց վարդագոյն էր։ Ուրիշ չորս թրթուրներ որոնք միայն իրենց հինգերորդ տարիքին՝ կարմրաներկ տերեւներ կերած էին, առաջին խումբին չափ կարմիր խողակներ տուին։

Պիեո քը մեքիէն կոչուած ներկով դուռաւորուած տերեւներով անած թրթուրները պակաս ախորժակ կը ցուցնէին եւ անոնց արտադրած մետաքսը նուազ էր քանակութեամբ և թեթեւ կերպով կապտագոյն։ Վերջապէս ուրիշ թրթուրտուով մը թրջուած Troèneի (բրնա աղանձ) տերեւներով անած քանի մը թրթուրներ ճերմակ խողակներ տուին։

Այս փորձերէն յայտնի կ'երեւայ որ չեղճ կարմիր ներկը չերաբին ներքին թաղանթներէն անցնելով կը տարբարարուի, մինչդեռ Պիեո քը մեքիէնը դժուարաւ, իսկ թրթուրտը բնաւ չանցնիր անոնց մէջէն։ Մետաքսը թեւհանէն ելլելու ժամանակ՝ առ երեսս աղտեղեղէն դուռաւորուելուն ենթադրութեան պատասխանելու համար, Լըվրա և Գոնթ ար-

տադրելու մօտեցած երկու թրթուրներու, չեղճ կարմիր գոյնի ներքայտումները ըրած էին ետեւի թաթիկներուն վրայ, ասոնք անմիջապէս կարմիր ներկուեցան և առանց ամենեւին անհանգստութիւն ցուցնելու սկսան թեթեւ կերպով կարմրեցած մետաքս մը հիւսել։

Երկու զանազան թրթուրներու վրայ՝ մէկը դեղին մետաքսով և միւսը ճերմակ մետաքսով՝ կատարուած նմանօրինակ փորձերու մէջ տերեւները ուտուելէն անմիջապէս վերջ, ոմանք մանիշակագոյն՝ իսկ միւսները բաց նարնջագոյն դեղին գոյն մը առին։ Դիտելու արժանի կէտ մը կար. որքան որ դուռաւոր անհագուութիւնը երկարատեւ ըլլայ՝ այնչափ դուռաւորումը կը չեչտուի։

Ուրեմն այս խողարկութիւններէն կը հետեւի, կ'եզրակացնեն Լըվրա և Գոնթ, արեւան միջոցաւ մարսողական խողովակէն մետաքսի վրայ դուռաւորիչ նիւթի մը անցնելու կարելիութիւնը։

Այս եզրակացութիւնը, կ'ըսեն, կը ներէ մետաքսներուն բնական գոյնին ծագումը միատեղ տերեւներուն կանանչ դուռաւորիչ նիւթին մէջ. մետաքս մը ճերմակ է՝ որովհետեւ ոչ մէկ դուռաւորիչ նիւթ կրցած է անցնիլ մետաքսային պարկին մէջ, կանանչ մետաքսին գոյնը տերեւին կանանչ նիւթէն առաջ կուգայ։ Արդարեւ, դիտած ենք որ տեսակ մը կանանչ մետաքս արտադրող թրթուրներու արեւնը տերեւին կանանչ գոյնին ուրուակերպը կը ներկայացնէ։ Դեղին մետաքս տուող տեսակները՝ մորթին տակ դանուած դեղին նիւթին յարեւման էին։

Տեղի չիկայ ենթադրելու թէ՛ մետաքսներուն նիւթը յերկրուած ըլլայ նոյն իսկ կենդանիին կողմէն, ինչպէս կարծել տուած էին արուեստական դուռաւորման ժխտական արդիւնքները։ Իրաւի, այս փորձերը շատ հետաքրքրական և շատ ճարտար են, բայց անկից հետեւցնել՝ ինչպէս ըրաւ բանիբուն հրատարակիչ մը, թէ հիմալուքնէ հնար է դուշակել այն ժամանակը յորում կարելի պիտի ըլլայ արուեստական կերպով ներկել մետաքսները թրթուրներուն միջոցաւ, դեռ շատ հեռավոր բան է։

Մետաքաներուն գունաւորման արուեստական խնդրոյն իսկական լուծումը՝ զոր Պ. ալ Բարսիլ կ'աւետէր վերջերս Տեպա լրագրին ընթերցողներուն, պարզապէս ցնորք մըն է մետաքաներուն նկատմամբ և եթէ հոս մէջ:

կ'ակնարկենք այս բանիս՝ ցուցունելու համար է միայն թէ չտա անդամ մեծամեծ գիտուններ իրենց երեւակայութեան զոհ կ'ըլլան ճարտարուեստից գործնական ասպարէզին

Պ. ՆԱՐԻՍ

ԳԱՇՆԱԿՈՒԹՅՆԵՐ

Պ. Է. Վ. ԻՆ

Դիչ մը յոգնած անուրջիս մէջ լուսայեւ,
Օրօրելէն յոյսերս, սէրերս պարմանի,
Երբ խէշալս կ'երազէի անհամբեր,
Ան դէմս ելաւ, իր դէմքովը գեղանի:

Մի՛ հարցունէք թէ ո՛ւր ճանչցայ,—չե՛մ յիշեր.
Ան որ սրտիս, գգունանքներուս—գիրդ եղեմ,—
Ան որ տղու ըղձանքներուս անգիշեր,
Պարիկն եղաւ միայն սիրելլս գիտեմ:

Ու կարծեցի սիրուած ըլլալ տալիօրէն,
Եւ այս յոյսով՝ երջանկացած, խելայեղ,
Դեղձներով երգեմ ըսի, դէմքն իրեն,
Շնորհնէ՛րը երգեմ, ըսի ամէն հեղ:

Դաշնակութիւնն առի հեծող նուագին,
Բուրումները առի՛ բոլո՛ր վարդերուն,
Յաւմիկներուն, ամբուլներուն հիւրիկին,
Անոր շունչը երազելով, թրթուռն:

Արշալոյսին գոյներն առի անուրջի,
Ու սլացքը աղանիկին օգակայ,
Որ կը սուրաց, կը հեռանայ, կը թռչի,
Երբ սրտահամար մէկը իրեն մօտենայ:

Բայց չի կրցայ դրի առնել անհատնում,
Անոր մարմնին շնորհները նախընծայ,
Ու ժողովիս մէջ, հիասթափած, օրօրուն,
Դեղեցկութեան արշուոթներէն գինովցայ:

Զի աչքին մէջ հմայքը կայ անհունին,
Եւ մարմնին շուրջ պաշտումն է որ կը հակի.
Ծաղիկները անոր շունչն է որ ունին,
Թռչունները անոր ձայնը դաշնակի:

Ս. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՈՒՐՈՒԱԳԻԾՆԵՐ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

ԱՐԵԱԿ ԱՆՊՈՅԱԶԱՆ

Կանխահառ բանասէր մը, որ Կեղրոնա-
կանի գրասենյակներուն վրայէն ցոյց տուած
է իր այդ հակումը: Քանի մը տարուան մէջ՝
Պոլսոյ գրեթէ բոլոր թերթերուն մէջ իր հը-
րատարակած յօդուածները՝ ստորագրուած թեամբ
կամ ծածկանունով՝ մէկ-երկու խոշոր հատոր
կազմելու համար ծառայ ունին արդէն. և
որակն ալ քանակէն վար չի մնար: Հմուտ-
թեան եւ ուսումնասիրութեան բաւական
պաշար կայ այդ գրութեան մէջ, թուա-
նշաններով, ծանօթագրութիւններով բեռնա-
ւորուած: «Գրականական» ճիւղին մէջ re-
cordը չհամար կրնայ նկատուիլ 1902ի Տարե-
ցոյցին նուիրած քննադատականովը որ գրեթէ
տարի մը տեւեց ու Տարեցոյցէն ընդարձակ
եղաւ:

Իր նախասիրական նիւթն է եկեղեցական
երաժիշտներու և ձայնագրագէտներու կեն-
սագրութիւնը որուն վրայ շատ բան գիտէ
ու չի յոգնիր հաւաքել: Գումգաբուրի դուրսի
Դպրաց Դասը գիտակցօրէն ընտրութիւն մը
կատարած եղաւ՝ իրեն ատենապետ նշանակե-
լով այս մասնագէտ երիտասարդը, որ առա-
հովադէս նոյնչափ հաճոյք զգաց այս ընտ-
րութենէն որքան պիտի զգան Կիւս-
թավ Լառումէ կամ Էտմոն Հարօքուռ՝ Յրան-
սական Ակադեմիին մէջ գրաւելով Լըկուվէի
մահուամբ բաց մնացած աթոռը որուն թեկ-
նածու են: Ճաշակի, հակումի խնդիր, որուն
համար չենք մեղադրեր մեր բարեկամը. կը
գնահատենք, ընդհակառակը, իր այս ան-
կեղծ յարումը դպիրներու և երաժիշտներու
դասին. վասն զի, եթէ ամէն զարգացած և
ուսուող անձ՝ հանրային կեանքի մէջ՝ պատ-
ուակալ պաշտօններուն թիւը, փայլունը վնաս-
ուէր, ո՞վ պիտի համէր խոնարհ ու բարե-
պաշտիկ պաշտօններուն, ինչպէս է Դպրաց
Դասի մը անդամակցութիւնը:

Արշակ Ալպոյաճեանը կամ «Ս. Անդե-
ղեայ»ն անձամբ չի ճանչցողները՝ թերեւս
կ'երեւակայեն զինքը, իր գրութեան մէջն և
մանաւանդ իր ընտրած գրական սեռէն դա-
տելով, հասուկ անձ մը, Չամուրճի Պատ-
ուելիի ծօթէն, ժամանակակից դաստիարա-
կութեամբ մը օժտուած: Եւ զարմացան ան-
շուշտ, կարգալով «երիտասարդ» բառը զոր
գործածեցի իրեն համար: Իրողութիւնը սա
է որ մեր արդի գրողներուն, նորերուն մէջ,
տարիքով կրտսեր մը կրնայ նկատուիլ ինքը,
թէեւ իր մտաւորական կարողութեամբ ու
զարգացումով՝ երիտադոններուն շարքին
մէջ դասուելու արժանի ըլլայ:

Մեծագոյն մասով եկեղեցական երաժշ-
տութեան վարպետներուն կենսագրութեան
նուիրուած այս գրիչը, — հակադրութեամբ մը
որ պատուաբեր է իրեն համար, — իր առաջին
տպագիր հատորը նուիրած է կին գրագէտի
մը, վիպասանուհիի մը կենսագրութեան, և
այն խղճմտութեամբ ու ձեռնհասութեամբ
որով գիտէ ներկայացնել, օրինակի համար,
Տիրացու Արիսի կամ Գաբրիէլ Սրանեանի
կեանքն ու գործերը, ներկայացուցած է
մեզի... Արբուհի Տիւսարի կեանքն ու գոր-
ծերը: Այս եղականութենէն ետքը, չլիտի
զարմանանք, եթէ իր հրատարակելիք երկ-
րորդ հատորին՝ Արմենակ Հայկունիի վրայ
պատրաստած ուսումնասիրութեան՝ յաջորդէ
թատերական հատոր մը:

Տարիքը երեսունէն շատ պակաս, բարեձև
հասակով, ժպտուն խօսուածքով — բայց միշտ
վիճաբանելու կամ ընդդիմախօսելու տրա-
մադիր — համակրելի երիտասարդ մըն է Ար-
շակ Ալպոյաճեան որուն աչքերէն անբաժան
ակնոցին տակ սկիւտուկի նայուածք մը կ'ուզ-
դուի խօսակցին: Այս գրիչ մշակը տեսնելու
համար՝ իր հասցէն չգիտցող մը՝ Ղալաթիոյ
Մատենադարանին կողմը կամ լրագրաց խմբ-
ագրատունները պիտի ուղղէր քայլերը, մինչ-
դեռ Չաքմաքճըլարի դպրութիւնը ելլելու է,
ուր՝ շալեղէններու վաճառատան մը հաշուա-
սեղանին առջեւ օրն ի բուն գործի վրայ
պիտի գտնէ «Արբուհի Տիւսար»ի և «Արմե-
նակ Հայկունի»ի կենսագրող որ իր գիշերա-
յին հանգիստի ժամերը միայն նուիրելով դը-

բական աշխատութեանց՝ այնքան բան արտադրած է :

Հապա եթէ արուեստով ալ գրագէտ—բանասէր մը ըլլար...

ԳԱՄԷՐ

Յաջորդ թիւով

ԷՋ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

ՔՐԻՋԱՆՔՄԷ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՕՐԵՐ

ԿՈՐՈՂԻՈՍԱԿԱՆ ՕԾՈՒՄ

Կիրիկիոյ Ս. Կաթողիկոսին օծման արարողութիւնը հանդիսաւորապէս կատարուեցաւ կիրակի օրը, 20 ապրիլ, Սիսի մայր—քաճարին մէջ : Ուխտաւորներու ստուար բաղմութեան պատճառաւ, չարաթ իրիկունքնէ ընդարձակ տաղաւար մը կանգնած էին եկեղեցւոյ բակին մէջ : Կիրակի առաւօտ Պատարագ մատուց Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոսը : Եկեղեցական կանոններուն համաձայն՝ Օծման պահուն, Ն. Ամենապատուութեան գլխուն Ս. Միւռօն թափուեցաւ, մասը Կաթողիկոսական մատանին անցուեցաւ, ձեռքը Ս. Աւետարանն ու Կաթողիկոսական մական տրուեցան, և զուխը ծածկուեցաւ Կաթողիկոսական քօղքով : Այս կրօնային մեծաշուք արարողութեան ի տես, ամբողջ ժողովուրդը լցուած էր ցնծութեամբ : Հանդէսին կը նախագահէր Տ. Մովսէս Սրբազան : Ներկայ էին նաև Տ. Կիրակոս, Տ. Նիկողոս, Տ. Կարապետ եպիսկոպոսները, և վաթսուն վարդապետ ու քահանայ :

Օծման արարողութենէն վերջ, Ս. Կաթողիկոսը ջերմակին բարեմաղթութիւններ ըրաւ Ն. Կ. Վեհափառութեան արեւշատութեանը համար, որոնց ձայնակցեցաւ հազարաւոր ժողովուրդ «ամէն»ներով :

Ս. Պատրիարքը շնորհաւորական հեռագիր մը ուղղեց Կիրիկիոյ Ս. Կաթողիկոսին օծման առթիւ :

«ՄՍՆՋՈՒՄԷ»-Ի ՎԵՅՇԱՐԻՐԹՈՒԵԱՆԸ

Հրադրական չրջաններու բոլորման շարքի մը անցուցինք : Մանգոլմէի Էֆեֆաք ալ տօնեց, նախորդ կօթնակի վերջին օրը, իր

երրորդ չրջանին սկզբնաւորութիւնը՝ վեհահարեւրթուեակի մը հրատարակութեամբ, ծանօթ գրիչներէ ստորագրուած գրական գեղեցիկ յօդուածներով լեցուն : Այդ ժողովրդական օրաթերթը, երկու տարուան կարճ շրջանի մը մէջ, զգալի բարեփոխներ կրեց ու յառաջդիմութիւններ ըրաւ որոնք անկեղծ ուրախութիւն մը միայն կը սլատճառեն՝ մամուլի բարեկամներուն : Թերթին Տնօրէնը՝ Յովհաննէս Էֆ. Գալսեօեան իր յարատուութեան ողիւլը ու տկարանալ չգիտող աշխատասիրութեամբը՝ կատարեալ վարիչ մը հանդիսացաւ, և աջակցութեամբ Քասիմի նման կարող խմբագրապետի մը ու խմբագրական համակրելի մարմնի մը, միշտ դարգացման ճամբուն մէջ կը պահէ Մանգոլմէն, որուն կը մաղթենք նորանոր յառաջդիմութիւններ ու յարաճուն ծաւալում մը :

Ս. Պատրիարք Հայրը կիրակի առաւօտ պատարագեց և քարոզեց Խաչիւղի Ս. Ստեփաննոսեկեղեցին որուն առնալիմութիւնն էր, և յետոյ այցելեց Գալփայեան Որբանոցը ուր կը գտնուէին Խնամակալուհի Տիկիները որոնց հետ քանի մը ժամ խորհրդակցեցաւ այդ հաստատութեան սէլաքերուն վրայ, դահցուցիչ դանկով անոր արդի վիճակը : Երկուշաբթի, Ն. Սրբաղնութիւնը այցելեց Ս. Ներսէսեան վարժարանը ուր կը գտնուէր նաև Ուսումն. Խորհուրդի ատենապետ Տօքթ. Թորգոմեան Էֆ. և աշակերտներուն ու աշակերտուհիներուն կրթական վիճակէն և բարեկիրթ վարքութեամբէն մեծապէս դո՛ւ մնաց :

Կեօյեան հանգուցեալ Յակոբ Էֆ. ի քոյր՝ Օր. Երանիկ Կեօյեանի յուղարկաւորութիւնը կատարուեցաւ երկուշաբթի մեծ հանդիսաւորութեամբ՝ Բերայի Ս. Յովհան Ոսկերեանի եկեղեցիին մէջ : Առաւօտուն, հանդիսաւոր Պատարագ մատուց Ատանայի Հայ Հեռօնականաց առաջնորդ Տ. Թէրզեան եպիսկոպոս : Թաղման կարգին նախագահեց Տ. Պօղոս Էմմանուէլեան Կ.—Պատրիարքը՝ չրջապատուած բաղմաթիւ եպիսկոպոսներէ ու վարդապետներէ : Դասին մէջ կեցած էր Բերայի աւագերեց Տ. Յովհաննէս Ա. քահանայ Մկրտեան : Յուղարկաւորներու ստուար բաղմունք

Թեան մէջ կը նշմարուէին հայ և օտարազգի ծանօթ անձնաւորութիւններ: Հանդուցեալ բարեսիրտ Օրիորդը իր կենդանութեանը 2,500 ոսկի վազճ ըրած է Բանկալթիի Ս. Յակոբայ Անկեղանոցին, որպէս զի այդ գումարին կէսը դործածուի նոյն հաստատութեան մէջ մատուռ մը կառուցանելու, ուր պիտի ած-վոխուի Օր. Երանուհի Կէօգէեանի մարմինը, և միւս կէսին շահը պիտի դործածուի ձրի հիւանդներու դարմանման:

Գեղարուեստ, — Գահիրէի 1903ի Նկարչա-կան Սալոնին մէջ կարգ մը նկարներ ցուցադրեր է նաև Պ. Երուսաղ. Տէմիրճեան: Եգիպտոսի ֆրանսերէն թերթերէն մէկուն գեղարուեստական քննադատը խօսելով Պ. Տէմիրճեանի ցուցադրած նկարներուն վրայ, մասնաւորապէս կը դովէ անոր վրձինին նըր-բութիւնն ու դոյներուն ներդաշնակութիւնը: Յուցադրուած պատկերներն են՝ Դասաժա-մօրը, Խաղացողները, Սպասումը և Իրի-կունը: Պ. Տէմիրճեան բնիկ Կ. Պոլսեցի է, Կայս. Գեղարուեստից վարժարանէն, և ժա-մանակ մըն ալ Բարիդ նշանաւոր վարպետ-ներու աշակերտելէ ետքը՝ գացած հաստատուած է Եգիպտոս:

Պերուքի Հայոց հոգեւոր տեսուչը, Տ. Ներսէս Վրդ. Խապանան, այն եկեղեցական-ներէն է որոնք առանց Պատրիարքարանն ու լրագրութիւնը դադարեցնելու իրենցմով, հա-մետ գործունէութեամբ մը օգտակար կը դառնան եկեղեցիին, դպրոցին ու վանքին որոնք իրենց խնամքին յանձնուած են, և արդիւնաւոր պաշտօնավարութեամբ մը կը գրաւեն իրենց հօտին համակրանքն ու հա-մարումը: Զատիկի տօնին արարողութիւն-ները հանգիստաւոր կերպով կատարուել են Պէրուքի եկեղեցիին մէջ ուր ներկայ գտնուել են նաև երկու Բժշկական վարժարաններուն հայ ու սանողներէն զատ՝ Գեղմանական Որ-բանոցին աշակերտուհիները: Զատիկի կիրակի առաւօտուն, Պատարագէն ետքը, շնորհաւո-րական ընդունելութիւն կատարուել է տես-չարանին մէջ. որբուհիները երգեր երգել են և Տեսուչ Հայրսուրբը քաջալերական խօսքեր ուղղել է անոնց: Այս առթիւ, Տ. Ներսէս Վրդ. բարեմաղթութիւններ ըրեր է Վեհ.

Կայսեր արեւշատութեանը համար: Նոյն օրը, տեղւոյն օտարազգի հոգեւոր պետերը և աշ-խարհական անձնաւորութիւններ, որոնց մէջ կը գտնուի եղեր նաև Կամար պէյ Կալ-սարական՝ պաշտօնական համազգեստով՝ Զատիկի շնորհաւորական այցելութիւն տուել են Տեսուչ Հօր:

Գաւաիեզեան Կապի Յանձնաժողովին չըջանը լրացած ըլլալով՝ Խաւն Ժողովը իր վերջին նիստին մէջ վերահաստատեց այդ մարմինը իր պաշտօնին մէջ, եռամեայ պայ-մանաժամով: Անդամներն են, ինչպէս կը յիշուի, Տեառք՝ Գարբիէլ Նորատունիեան, Զարեհ Տիւլէր, Պատրիկ Կիւլպէնիկեան, Գր. Գարաիէօզեան, Սեպուհ Տէմիրճիպաշեան և Մկրտիչ Ասատեան էֆ. ներք: Բերայի Խաի-վիալ Օթէլին զնման գործողութիւնը կատարուած լմնցած է, իբրեւ կալուած՝ հաստա-տելի Որբանոցին: — Գարաիէօզեան Կտակի Յանձնաժողովը շարժուա մէջ բացառիկ գու-մարում մը ունեցաւ, նախադաշնութեամբ Ս. Պատրիարքին, և որոշեց գնել Խաիվիալ Օթէլին կից գտնուած գեաիներ որուն համար 2000 ոսկի վճարած է Գարաիէօզեան էֆ:

Հրատարակուեցաւ Վահան վրդ. Տէր-Մի-նասեանի Անգիր Դպրութեան երկրորդ հա-տորին Տրդ տետրը, Զատիկը:

ՕԹԵԼ “ՖԵՐԱՆ,”

Բրինքիւրօ, Նիդամի պողոտային վրայ, ծովահայեաց, ընդարձակ պարտէզներու մէջ՝ Վարձակալը, Առաքել Տեքեկեան որ այնքան խնամօք կը վարէ Պոլիս Սուլթան Համամի հանրածանօթ հախիկին Գասպար ճաշարանը, յանձն առած է նիւթական ամէն զոհողու-թիւններ ընել՝ իր բաղ-թաթիւ յաճախորդնե-րուն հանգստութեանը համար:

Գիները չափաւոր. լաւ և մաքուր սնունդ. պանդոկը բաց է Եւրօպական մայիս մէկէն սկսեալ:

Արսօնսէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃՆԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

“AU TALON D'OR,” O ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՋԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կազմուի համար պատրաստուած

Կալարա, Վոյլոսա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորածնութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար,—մանաւանդ չափու վրայ շինուելիք,—կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը:

Կ. Յ. ՏԵԻՐՄԵՆՃԵԱՆ ՅԱՆՉՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանձնէ վաճառականական պիտոյից, սպազբական գործերու պատրաստութեան հոգը.

Գին ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Մախուր եւ արագ գործօցնութիւն.

Արժէք կանխիկ. 5% ղեղչ.


Ծանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն մասամբ:

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԵԻՐՄԵՆՃԵԱՆ

ՍԱՄՍՈՆ



Անկարելի է որ բնտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սուննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՐԱՍՏ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, լակի ու սոսի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՍԻՆԿԵՐ
ՊԱՐԱՍՏ
ԿԱՅՍ

ԲԱՐԱ. } 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէլայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱՍԹ. } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամպէլին կայարանին դէմ.

ՊԱՐԱ. } 1. Սոյթան Համամ, Թ.
2. Սոյթան Պէյազիտ, Թրամպէլի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԵԻՏՍԵ. } Զարը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք օրի.

Կասաբեալ Խաւթաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բեքա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

**ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ**

ԲԵՐԱ, ՄԵԾ-ՓՈՂՈՅ, Թ. 200

ԿԱԼԱԹԱ-ՍԷՐԱՅԻ ԼԻՍԷՆ ԴԷՄ

ԴԵ. ԵՇ. ՇՐ. օրերը առատօտեան կանու-
խեն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԴԵ. Ուր. օրերը ճեն մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԻՆԻՍՏԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԸՆԴԿՐՈՒԹԵԱՆ
Տնօրէնութիւնը 1/14 մարտէն սկսեալ իր
գրասենականները փոխադրած է Պոլիս, Սուլ-
թան Համամ նորաշէն Բաթրճի Օղլու
Բասաժը:

ՏՈՔԹՈՐ Լ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ-ՄԱՆԿԱԲԱՐՁ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց
(Վկայեալ Բարիզէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հի-
ւանդութիւններ, կը կատարէ վիրաբուժա-
կան գործողութիւններ՝ վերջին կատարելա-
գործեալ գրութիւններով:

Բարիզի, Նանսիի հիւանդանոցներուն
մէջ երկար տարիներ օգնական-բժիշկի (էքս-
քերն) պաշտօնը վարած ըլլալով, գործնա-
կան ու փորձառական երկար ուսումնասի-
րութիւններ ընելէ վերջ, այս անգամ Կ.
Պոլիս եկած եւ հաստատուած է Բերա,
Թարլա Պաշը, Թիւ 136:

Ծանօթ. — Հիւանդներ կ'ընդունի ամէն օր
կէս օրէն վերջը իր բնակարանին մէջ, ժամը
1-4 (Ը. Ե.): Նրեքլարթի օրերը միեւնոյն
ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հի-
ւանդները:

13-20



ՅՈՎՍԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ
Պարսկական Վարժարանին

ԲԵՐԱ, ՄԵԾ Փաղոց, Թագսիմ, քիւ 61
Զրահեան աբաղրման

Պալպալեան ամէն օր ակոյալ ամէն տե-
սակ հիւանդութիւններով տառապողները
կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Ներք-
շաբթի մինչեւ ժամը 5: Դիշերուան ո եւ է
ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'ե-
րաշխատօրէ իր լեցուցած ու շինած ակոյա-
նները: Յորեկները ակոյալ քաշել տալու հա-
մար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին
կամքէն կախեալ է:

Աղփասներուն ձրի

ՄԻՍՏԱՆԱԿ

Գիշերներուն մէջ տօպիկեց ամբան
երբ մեր տեղն ըլլայ սենեակի քէ վրան,
Շատ մը միջասներ մեր ներսն ու վրան
Ման գալով, մեր միսն ուտել կ'արտօնուի:
Այդ ուտիւններուն սին, կանխածաման,
Անուկով՝ մըլուկ, յո՛ւ արիւնխման,
Գիշերներն անփուն հեծելով Աման,
Շատեր կը փնտռեն միջօրը ջնջման:
— Արգ, Ռեֆիւմ չե՛ այս, հապա աւետիս
Անոնց քնամիսն գտնուած է զարդիս.
Ազնիւ ընքերցող, հասո՛ր իմ արիս,
Նքէ հանգիստ փուն կուգես դու՝ պարսիս
Նքալ շուս ի կէտիկ-Բաշա-Պաշի
Գնել, միջասապան այն ազգու փոշի
Որուն մեկ տուփը, քե՛զ եւ ուրիշի.
Կը ծախէ միայն... դուրուշի
Լեւոն Կիւմիւլեան անուն՝ օգտուէ
Սուլթանիէ ծանօթ դէղարանին պէտ:

ՄԱՍՆԱԿԻՆ

Պահե՛ք-Գաբու քիւ 59 ծախալանառ
Նշան ԷՅ. Օղանեան: (Նախկին սուկի
Պողոս)

Բերա, Կալաթա Սերայի դէմ ծխալանառ
Գրիգոր ԷՅ. Օննիկեան:

Մեկ եւ երկու դուրեւոց փափքներ:
Նաեւ 50 իւրանց փափքներ 5 դրո.